ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ուսումնական ծրագիր
Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան» որակավորման «Ոստիկանության գործունեության կառավարում» առարկայի դասընթացի

Քննարկվել և հաստատվել է
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ուսումնական կենտրոնի Ընդհանուր
պատրաստականություն»կրթաճյուղի
01.06.2018-ի թիվ 4 նիստում

ք. Երևան
2018թ.

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկանության գործունեության կառավարում» առարկայի եռամսյա դասընթացի

Թեմա N	Թեմայի անվանումը	Ընդհանուր ամաքանակն ըստ թեմաների	Ժամաքանակն ըստ պարապմունքի ձևերի		
			դաս.	գործ.	սեմ.
1	Ոստիկանության կառուցվածքը, խնդիրները, գործունեության սկզբունքները: Ոստիկանության գործունեության իրավական կարգավորումը:	2	2		
2	«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները:	4	2		2
3	Ոստիկանության ծառայողին ներկայացվող պահանջները:	2	2		
4	ՀՀ Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին ՀՀ օրենքի հիմնական դրույթները:	4	2		2
5	Ոստիկանությունում ծառայողական կարգապահությունը, ղեկավարների և ենթակաների փոխհարաբերությունները:	4	2		2
	Ընդամենը	*16*	*10*		*6*

Կազմեց՝

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի ավագ դասախոս, ոստ. գնդապետ

_____ Լ.Գալստյան

Քննարկվել և հաստատվել է
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի նիստում արձանագրություն թիվ _4_01.06.2018թ.
կրթաճյուղի պետ, ոստ. փոխգնդապետ

_____ Ա.Ալեքսանյան

1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան դասընթացի ուսումնասիրման համար հատկացված է 16ժամ, որից՝

- դասախոսություն - 10 ժամ,
- սեմինար - 6 ժամ,

2. «Ոստիկանության գործունեության կառավարում» Դասընթացի ուսուցման նպատակը և խնդիրները

Առարկայի հիմնական նպատակն է՝ սովորողների մոտ ձևավորել ծառայողական բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարների, ենթակաների և գործընկերների հետ արդյունավետ ծառայողական հարաբերություններ կարգավորելու, առաջացած ծառայողական խնդիրները ճիշտ ընկալելու և տարբեր իրավիճակներում համապատասխան լուծումներ տալու ունակություններ և կարողություններ:

Նախատեսված նպատակին հասնելու համար առաջադրվում են հետևյալ խնդիրները՝

1. Տեսական և գործնական գիտելիքներ հաղորդել ոստիկանության կառուցվածքի, հիմնական խնդիրների, գործունեության սկզբունքների և իրավական հիմքերի մասին, ինչպես նաև ներկայացնել ոստիկանության դերը իրավապահ մարմինների համակարգում:
2. Սոովորողների մոտ ամրապնդել «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքների և ոստիկանության կարգապահական կանոնագրքի հիմնական դրույթների իմացությունը:
3. Բացահայտել և բացատրել ոստիկանության ծառայողական կարգապահության դերն ու նշանակությունը, ինչպես նաև ղեկավարների /հրամանատարների/ և ենթակաների հետ փոխհարաբերությունների կարգը:
4. Սովորողների մոտ ձևավորել ծառայողական անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:

3. Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

1. Հստակ ներկայացնել ոստիկանության կառուցվածքը, խնդիրները, գործունեության սկզբունքները և իրավական հիմքերը:
2. Ցույց տալ ոստիկանության դերը իրավապահ մարմինների համակարգում:
3. Լիարժեք բնորոշել ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները:
4.Կարողանալ ապահովել ծառայողական կարգապահության պահանջները ղեկավարների /հրամանատարների/ և գործընկերների հետ ծառայողական փոխհարաբերություններում:

4. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Դասընթացը սերտորեն կապված է «Ծառայության իրականացման մարտավարություն», «Մարդու իրավունքները և ոստիկանությունը», «Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը» առարկաների հետ:

5. Դասընթացի ուսուցման մեթոդական ցուցումներ

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների և սեմինարների տեսքով, որոնք անց են կացվում ինտերակտիվ մեթոդներով: Դասավանդման ընթացքում օգտագործվում են տեսանյութեր և դիդակտիկ պաստառներ: Իրավիճակային առաջադրանքների միջոցով սովորողների մոտ ձևավորվում են գործնական անհրաժեշտ հմտություններ և ունակություններ, որոնք տեսական գիտելիքների միջոցով ամրապնդվելով, դառնում են արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր պայման:

6. Ուսումնական նյութի բովանդակությունը

ԹԵՄԱ 1. Ոստիկանության կառուցվածքը, խնդիրները, գործունեության սկզբունքները: Ոստիկանության գործունեության իրավական կարգավորումը :

1. Ոստիկանության հասկացությունը:
2. Ոստիկանության կառուցվածքը և ստորաբաժանումները:
3. Ոստիկանության խնդիրները:
4. Ոստիկանության գործունեության սկզբունքները:
5. Ոստիկանության գործունեության իրավական կարգավորումը:

ԹԵՄԱ 2.« Ոստիկանության ծառայության մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները

1. Ոստիկանության ծառայողը:
2. Ոստիկանության պաշտոնների խմբերը և անվանացանկը:
3. Ոստիկանության կոչումները:
4. Ոստիկանության ծառայողին պաշտոնի նշանակումը:
5. Ոստիկանության ծառայողի իրավունքները :
6. Ոստիկանության ծառայողի պարտականությունները :
7. Ոստիկանության ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքների տեսակները :
8. Ոստիկանության ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը :

ԹԵՄԱ 3. Ոստիկանության ծառայողին ներկայացվող պահանջները

1. Ոստիկանության ծառայողին թույլատրվող այլ վճարովի աշխատանքներ կատարելը:
2. Ոստիկանության ծառայողին թույլատրվող միավորումներ և կազմակերպություններ ստեղծելը և անդամագրվելը:
3. Ոստիկանության ծառայողին այլ վճարովի աշխատանքներ կատարելու սահմանափակումները:
4. Ոստիկանության ծառայողին կուսակցություններում, միավորումներում և կազմակերպություններում անդամագրվելու սահմանափակումները:
5. Ոստիկանության ծառայողին հրամաններ տալու սահմանափակումները:
6. Ոստիկանության ծառայողին ներկայացվող այլ պահանջներ :

ԹԵՄԱ 4. ՀՀ Ոստիկանության կարգապահական կանոնագրքը հաստատելու մասին ՀՀ օրենքի հիմնական դրույթները

1. Ոստիկանությունում ծառայողական կարգապահության ապահովման սկզբունքները:
2. Ոստիկանությունում ծառայողական կարգապահության օրենսդրությունը:
3. Ծառայողական քննություն իրականացնող ստորաբաժանումները և ծառայողները:
4. Ծառայողական քննություն նշանակելու առիթները :
5. Ծառայողական քննության ժամկետները :
6. Ծառայողական քննության դադարեցումը :
7. Ոստիկանությունում ծառայողի նկատմամբ խրախուսանքների կիրառման կարգը:
8. Ոստիկանությունում ուսումնական հաստատության առկա ուսուցման ձևով սովորողների նկատմամբ խրախուսանքներ կիրառելու առանձնահատկությունները:
9. Ոստիկանությունում ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերի կիրառման կարգը :
10. Ոստիկանությունում ուսումնական հաստատության առկա ուսուցման ձևով սովորողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժի ենթարկելու առանձնահատկությունները:
11. Կարգապահական տույժը կիրառելու և հանելու կարգը:

***ԹԵՄԱ* 5. Ոստիկանությունում ծառայողական կարգապահությունը, ղեկավարների և ենթակաների փոխհարաբերությունները**

1 . Ծառայողական կարգապահությունը ոստիկանությունում:
2. Ծառայություն կատարելիս ղեկավարների /հրամանատարների/ և ենթակաների փոխհարաբերությունները:
3. Ավագներ և կրտսերներ հասկացությունը:
4. Ղեկավարների /հրամանտարների/ դերը ծառայողական կարգապահության ամրապնդման պահպանման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

6. ՀՀ Սահմանադրությունը 1995թ.
7. ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին» 2001թ.
8. ՀՀ օրենքը «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002թ.
9. ՀՀ Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը 2005թ.